Հաստատում եմ

Նաիրի համայնքի ղեկավար

_____ Ն. Սարգսյան

<<30>> սեպտեմբեր 2025թ.

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

<<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/13>>

1. Պատվիրատուի անվանումը, գտնվելու վայրը. Նաիրիի համայնքապետարան, Հայաստանի Հանրապետություն, ք. Եղվարդ, Երևանյան 1:

2. Գնման անհրաժեշտությունը և գնման ձևի ընտրության հիմնավորումը. Գնման առարկա է հանդիսանում Նաիրի համայնքի կարիքների համար Պռոշյան բնակավայրում սգո սրահի կառուցման աշխատանքների ձեռքբերումը: Գնման գործընթացն իրականացվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի համաձայն:

3. Հրավերը և դրանում կատարված փոփոխությունները. <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 06-ի թիվ 386-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային ձևով գնումների կատարման>> կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան կազմվել է հրավեր, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 7-ին կայացած նիստում: Հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

4. Գնման վերաբերյալ ստացված հարցումները և ներկայացված պարզաբանումները. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, պարզաբանումներ չեն ներկայացվել:

5. Հայտ ներկայացրած մասնակցի տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները.

<<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/13>> ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացվել է թվով մեկ հայտ՝

Հ/հ	Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	Էլեկտրոնային փոստի հասցեն	Տ/Փ-ի ստացականի հ/հ
1	<<Մաքս –Վուդ>> ՍՊԸ, <<Արամե>>ՍՊԸ և <<Սեկոնետ>> ՍՊԸ կոնսորցիում	Maxwood-artsakh@mail.ru հեռ. 097-21-12-00	000267694

6. Հայտով ներկայացված գները.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը (ՀՀ դրամ), ընդ որում՝		
		Արժեք(ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1				
1	<<Մաքս –Վուդ>> ՍՊԸ, <<Արամե>>ՍՊԸ և <<Սեկոնետ>> ՍՊԸ կոնսորցիում	157 000 000	31 400 000	188 400 000

7. Հայտերի գնահատման կարգը և դրանց գնահատման արդյունքները. Հայտերը գնահատվել են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և հրավերով սահմանված կարգով, և գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 3 որոշմամբ ընտրված մասնակից է ճանաչվել.

-N 1 չափաբաժնի մասով <<Մաքս –Վուդ>> ՍՊԸ, <<Արամե>>ՍՊԸ ցև <<Սեկոնետ>> ՍՊԸ կոնսորցիումը:

8. Հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը. <<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/13>> ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտեր չեն մերժել:

9. Պայմանագիրը, իսկ գնման գործընթացի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

Չափաբաժին 1

2025 թվականի սեպտեմբերի 29-ին Պատվիրատու՝ Նաիրիի համայնքապետարանի, որը գտնվում է ք. Եղվարդ, Երևանյան 1 հասցեում, և Կապալառու՝ <<Մաքս –Վուդ>> ՍՊԸ, <<Արամե>>ՍՊԸ և <<Սեկոնետ>> ՍՊԸ կոնսորցիումի, որը գտնվում է ք.Երևան, Ռիզայի փ.126/4 բն. 6հասցեում, միջև կնքվել է Նաիրի համայնքի Զովունի բնակավայրում սգո սրահի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր N <<ԿՄՆՀ-ԲՄԱՇՁԲ-25/13>>:

Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 188 400 000 (մեկ հարյուր ութսունութ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

10. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ հայտնաբերվելու դեպքում դրանց և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողությունների համառոտ նկարագիրը. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

11. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել:

Հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Վիրաբյան

(Կազմվել է <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի համաձայն)